

Ֆինանսական համակարգող Կրթության գերազանցության ազգային ծրագրում (ԿԳԱԾ)

«Այբ» կրթական հիմնադրամ

Աշխատանքի տեսակը՝ լրիվ դրույք, երկարաժամկետ

Աշխատանքի վայրը՝ Կորյունի 19ա, Երևան, Հայաստան

Աշխատանքի նկարագիր

ԿԳԱԾ-ի ֆինանսական համակարգողը կազմակերպում և համակարգում է ԿԳԱԾ-ի շրջանակում ֆինանսական գործառնությունները, վարում և կարգավորում ֆինանսական փաստաթղթաշրջանառությունը, իրականացնում պետական գնումները՝ ներքին կանոնակարգերի և ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Համակարգում է ԿԳԱԾ-ի տարեկան բյուջեի կազմումը, ծախսերի վերահսկումը՝ ապահովելով համապատասխանությունը հաստատված բյուջեին: Ամենօրյա աշխատանքով նպաստում է «Այբ» հիմնադրամի սկզբունքների և նպատակների իրականացմանը և հիմնադրամի առաքելությունը շահառուներին ավելի հասանելի դարձնում:

Պարտականություններ

- Վարել ֆինանսական փաստաթղթաշրջանառությունը, այդ թվում կազմել գործարքների համապատասխան փաստաթղթավորված հիմքերը, իրականացնել հիմնավորումների հավաքագրումն ու ստուգումը:
- Կարգավորել ֆինանսական փաստաթղթաշրջանառությունը, այդ թվում ստանալ համապատասխան հաստատումներ, ձեռք բերել համաձայնեցումներ և նախաձեռնել պայմանագրերի կնքում:
- Վերահսկել առաջնային ֆինանսական փաստաթղթերի, այդ թվում վճարման հանձնարարականների և ակտերի շրջանառությունը, կատարել դրանց արխիվացում:
- Կազմել կառավարչական ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաև ներկայացնել ֆինանսական այլ տեղեկատվություն և/կամ հաշվետվություն՝ համապատասխան ներքին կամ արտաքին իրավասու մարմնի պահանջի հիման վրա:
- Կազմել թիրախային հաշվետվություններ և ապահովել ծրագրերի պարբերական հաշվետվողականությունը:
- Կազմակերպել տարեկան բյուջեի կազմման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման գործընթացը, իրականացնել ստացված տեղեկատվության համակարգում ու ամփոփում, ամփոփ բյուջեի մշակում/լրամշակում և ներկայացնել կից պարզաբանումներ, հիմնավորումներ իրավասու մարմնի հաստատմանը:
- Հաստատել ընթացիկ բոլոր ծախսերն ըստ հաստատված բյուջեի, իրականացնել բյուջեի կատարման վերահսկում:
- Կազմել տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ ամսական, եռամսյակային հաշվետվություններ/կատարողականներ և ներկայացնել իրավասու մարմնի հաստատմանը:
- Պլանավորել պետական գնումների շրջանակում տարեկան և ընթացիկ գնումները:

- Կազմակերպել և համակարգել գնումների գործընթացն ըստ ՀՀ օրենսդրության, պետական գնումների ընդունված գործընթացի, ինչպես նաև հիմնադրամի ներքին կանոնակարգերի:
- Մշակել ԿԳԱԾ-ի շրջանակում ֆինանսագործառնական աշխատանքների համակարգման նպատակով ընթացակարգեր, կազմակերպել քննարկումներ և ներկայացնել համապատասխան իրավասու մարմնի հաստատմանը:
- Գնահատել առանձին գործընթացների, ծրագրի ենթաբաղադրիչների արդյունավետությունը, առաջարկել արդյունավետության բարձրացման մեխանիզմներ:
- Մասնակցել միջազգային պայմանագրերի կազմման աշխատանքներին:
- Ներգրավվել ԿԳԱԾ-ի շրջանակում այլ աշխատանքների իրականացման մեջ՝ ըստ անհրաժեշտության:

Պահանջվող որակավորումներ և հմտություններ

- Բարձրագույն կրթություն (սախընտրելի են ֆինանսների, հաշվապահության կամ տնտեսագիտության ոլորտները)
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ (սախընտրելի է բանկային կամ ոչ առևտրային ոլորտը)
- Ֆինանսական կառավարման և բյուջետավորման սկզբունքների, գործիքների, մեթոդների իմացություն
- ՀՀ օրենսդրության՝ ֆինանսատնտեսական գործունեության ոլորտին առնչվող հիմնական դրույթների լավ իմացություն, այդ թվում՝ ՀՀ գնումների մասին օրենքի իմացություն
- Համակարգչային գիտելիքներ, Microsoft Excel-ի լավ իմացություն
- Ժամանակի կառավարման հմտություններ
- Տարաբնույթ աշխատանքների միաժամանակյա իրականացման հմտություններ՝ պահանջվող որակի պահպանմամբ
- Տվյալների բազայի վերլուծման և համակարգման հմտություններ
- Քննադատական և կառուցողական մտածողություն
- Հաշվետվություններ և զեկույցներ կազմելու հմտություններ
- Խնդիրների բացահայտման, ներկայացման հմտություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու հմտություններ
- Անորոշության պայմաններում կողմնորոշվելու հմտություններ
- Հաղորդակցության հմտություններ

Դիմելու գործընթաց

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները vacancy@ayb.am հասցեին: Խնդրում ենք նամակի թեմայի (subject) դաշտում պարտադիր նշել պաշտոնը, որի համար դիմում եք: Նախնական հավանություն ստացած թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Դիմելու վերջնաժամկետ՝ 20/02/2018

Մեր մասին

«Այբ» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2006 թվականին Նրանց կողմից, ովքեր իրենց ձեռքբերումները համարում են կրթության արդյունք և կամենում միասնական ներդրամաբ ստեղծել բարձրորակ կրթություն ապահովող համակարգեր: «Այբ» կրթական հիմնադրամի նպատակն է՝ ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և աջակցել հայկական կրթության զարգացմանը:

«Այբ»-ն իրականացնում է բազմաբնույթ գործունեություն հանրակրթության ոլորտում մշակելով կրթական բարեփոխումների ծրագրեր, նախագծելով և հիմնելով օրինակելի կրթական միջավայրեր, որոնք իրան են ծառայում համակարգային փոփոխությունների համար: